«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ***Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում***

Առարկան՝ ***Մայրենի, Մաթեմատիկա***

Հետազոտող ուսուցիչ՝/դասվար/ ***Հայարփի Ստեփանյան***

Ուսումնական հաստատություն՝ ***«Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ***

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ..... 3 էջ
Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ..... 6 էջ
Կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորումը Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում ..... 8 էջ
Ընտանեկան արժեքների զարգացումը գրական ստեղծագործությունների միջոցով ..... 14 էջ
Ընտանեկան արժեքները գրականության մեջ ..... 15 էջ
Ազգային եվ համամարդկային արժեքները ժողովրդական բանահյուսության մեջ ..... 16 էջ
Արցախյան բանահյուսություն ..... 17 էջ
Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում ..... 21 էջ
Բարին և մաթեմատիկական կրթությունը ..... 21 էջ
Սերը և մաթեմատիկական կրթությունը ..... 23 էջ
Կրտսեր դպրոցականի մոտ արժեհամակարգ ձևավորելու իմ քայլաշարը ..... 24 էջ
Եզրակացություն ..... 25 էջ
Օգտագործված գրականություն ..... 27 էջ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՆՔԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԻՄԱՍՏԸ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՁԵՎԱՎՈՐԻ ԱՐԺԵՔՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի սնվելու, հագնվելու, տեղաշարժվելու: Մեր այս և այլ կարիքներ մենք ապահովում ենք զանազան իրերի ու առարկաների միջոցով, որոնք, բնականաբար, մեզ համար ունեն որոշակի արժեք: Մեզ համար արժեք կարող են ունենալ ոչ միայն իրերն ու առարկաները, այլև առանձին մարդիկ, մեր մտքերը, հիշողությունները, զանազան գաղափարներ, երևույթներ: Արժեքների աշխարհը բազմազան է: Մեր ունեցած նյութական, հոգեկան, բարոյական, գեղագիտական, կրոնական, սոցիալական, ազգային, համամարդկային և այլ արժեքները կազմում են մեր արժեքային համակարգը և պայմանավորում մեր արժեքային կողմնորոշումը:

Ուսումնական հաստատություններում ստացած մեր գիտելիքներն ու կարողությունները նույնպես արժեքներ են, որոնք կազմում են կրթական արժեքների մի մասը: Ժամանակակից ժողովրդավարական կրթական համակարգերը միտված են դեպի արժեքներ. դրանց հիմնական խնդիրը ապագա քաղաքացուն անհրաժեշտ արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման ձևավորումն է:

Անկախությունը, մեզանում արմատավորվող հասարակական և տնտեսական նոր փոխհարաբերությունները թելադրեցին նաև կրթական մոտեցումների, դիրքորոշումների փոփոխություն. գիտելիքի տիրապետմանն ուղղված կրթությանը փոխարինելու էր գալիս մարդասիրական կամ հումանիստական արժեքների ձևավորմանն ուղղված կրթությունը: Պետք է նշել, որ անցումը բավականին ցավագին էր և շարունակում է մնալ դժվար իրականանալի: Կային և կան մանկավարժական մոտեցումների, նոր կրթական տեխնոլոգիաների ներդրման, արևմտյան փորձի օգտագործման, ազգային արժեքների ձևավորման և իմաստավորման հետ կապված դժվարություններ: Ուսուցչության մի զգալի հատվածի մոտ առկա են նաև նոր մոտեցումների և ուսումնական նոր նյութի տիրապետման հետ կապված մասնագիտական և հոգեբանական դժվարություններ:

Առաջադրված խնդիրների լուծման համար քննարկվում է դաստիարակության հիմնախնդրի նկատմամբ առկա մոտեցումների ընտրության հարցը. բարոյական վարքի սկզբունքների ձևավորումը թողնել ընտանիքի՞ն, եկեղեցու՞ն և հասարակությա՞նը, թե՞ գործի մեջ ներգրավել նաև հանրակրթական դպրոցը, բավարա՞ր է սոսկ վարքային սովորույթների

ձևավորումը, թե՞ անհրաժեշտ է նաև բարոյական արժեքների նկատմամբ գիտակցական վերաբերմունք:

Հարկ է նշել, որ վերջին շրջանում թե՞ հանրակրթության պետական կրթակարգով և թե՞ հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներով որոշակի ուշադրություն է դարձվում նաև սովորողների մոտ արժեքների ձևավորման խնդրին:

Իրականում դաստիարակության գործառույթը անհրաժեշտ է իրականացնել ոչ թե աշակերտի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան խրատներ տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների համակարգի հետևողական ձևավորմամբ: Հարկ է նկատել, որ արժեքների ձևավորումը կազմում է հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկայի կրթական ներուժի կարևոր մաս:

Մաթեմատիկական կրթությունը՝ մաթեմատիկայի դասավանդման միջոցով իրականացվող կրթական գործընթացը, այսօր ոչ միայն մաթեմատիկայի ուսուցում է: Այն ոչ միայն մաթեմատիկական գիտելիքների և կարողությունների, այլև արժեհամակարգի ձևավորման գործընթաց է: Եվ մաթեմատիկան այս տեսակետից ունի կրթական մեծ ներուժ և ի զորու է իր վճռական խոսքը ասելու ապագա քաղաքացու արժեքային ողջ համակարգի ձևավորման գործում:

Պետք է նկատի ունենալ, որ մաթեմատիկայի ուսումնական շատ նյութերի՝ սովորողներին տված գիտելիքն ու կարողությունը ամենեվին էլ կարևոր չեն ապագա քաղաքացու համար: Մինչդեռ այդ նյութերը ձևավորում ու զարգացնում են հոգեկան, ճշմարտային, բարոյական, գեղագիտական, ազգային և այլ արժեքներ, որոնց համակարգն էլ պայմանավորում է ապագա քաղաքացու արժեքային աշխարհը, արժեքային կողմնորոշումը:

Բարոյական արժեքները կազմում են մարդու **արժեհամակարգ**ի կարևորագույն մասը և դրանց ձևավորումը դաստիարակության հիմնական խնդիրներից է, եթե ոչ հիմնականը:

Արժեհամակարգ. *Հետևյալ հանրահայտ պատմությունը ցույց է տալիս, որ անգամ նույն աշխատանքը ընկերային միևնույն խմբին պատկանող մարդկանց համար կարող է ունենալ տարբեր արժեքներ, ինչը նույնպես պայմանավորված է այդ մարդկանց արժեքային համակարգով ու արժեքային կողմնորոշմամբ:*

Քարագործ երեք բանվորների հարցնում են, թե ինչով են նրանք զբաղված: Առաջինը զարմացած ասում է.

-Չե՞ք տեսնում, քար եմ կրում:

Երկրորդ բանվորը կարծեք նեղանում է առաջադրված հարցից:

-Չե՞ք տեսնում, ընտանիքիս համար հաց եմ վաստակում, -ասում է նա:

Երրորդ բանվորը իր աշխատանքում արժևորում է բոլորովին այլ բան. նրա բերած հոգևորը: Նա ոգևորված պատասխանում է.

-Ես կառուցում եմ Փարիզի Աստվածամոր տաճարը:

Անշուշտ, սովորողների բարոյական արժեքների ձևավորման գործում գրականության և պատմության կամ հումանիտար ցիկլի մյուս ուսումնական առարկաների հնարավորությունները անհամեմատ մեծ են, որովհետև հերոսության, հայրենասիրության, սիրո և բարոյական այլ որակների ձևավորման համար գրականությունը կամ պատմությունը կարող են դիմել գրական կամ պատմական ստեղծագործությունների, որոնցում առկա են նշված որակները կրող բազմաթիվ հրաշալի կերպարներ ու պատմական դեմքեր: Մինչդեռ մաթեմատիկայի ուսումնական նյութը նման՝ կերպարային մոտեցման հնարավորություններ չի տալիս: Բայցևայնպես, մաթեմատիկան նույնպես ունի բարոյական արժեքների ձևավորման հսկայական ներուժ:

Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձ , որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է:

Ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Արժեքը երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:

Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Կրտսեր դպրոցականի արժեքային համակարգի ձևավորումը Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունն ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:

Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:

Արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով,այլ կիրառելով: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա: Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը: Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:

Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է մայրենի լեզվի առանձնահատկություններով: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են՝

• Լեզվի գործառույթներում,

• Տարրական դպրոցում լեզվի ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, նշանակողական, ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման, մտքերի ձևավորման ու արտահայտման, հուզական և այլն: Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում: Տարրական ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում, որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում:

Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել:

Քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ, բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևավորելու ձգտումը: Այս հատկանիշը թույլ է տալիս դրանք ներառել բարոյական արժեքների խմբում:

Ազգային արժեքներին հաղորդակցվելը նախնիների ավանդույթները պահպանելու, շարունակելու, դրանց հավատարիմ մնալու համոզմունք է, ինչպես նաև սեր հայրենի բնօրրանի հանդեպ: Ազգային մշակույթն արտացոլում է լեզվի հարստությունը, պատկերավորությունը, արտահայտչականությունը և գեղեցկությունը: Գեղեցիկը ըստ Ս. Ի. Օժեգովի, մարմնավորում է այն ամենը, ինչը գեղագիտական վայելք է պարգևում: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ. Լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ:

Հուզական գործառույթը կապված է հույզերի և զգացմունքների արտահայտման հետ: Հուզական ներգործության առավելագույն հնարավորություններով են օժտված գեղարվեստական կերպարները: Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Հուզական զգայունությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի, այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներ են:

Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթը նշանակում է, որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում: Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական մտածողությունը, մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք և գեղագիտական մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք, արժեքներին հաղորդակցում: Անձի վարքում դրսևորվող՝ լեզվի կարգավորիչ գործառույթն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի և բարոյական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը: Այն նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը: Դրանք հատկապես այն արժեքներն են, որոնք վերաբերում են այլ մարդկանց նկատմամբ հարաբերություններին, բարեկիրթ

հաղորդակցմանը, վարվելակերպին, հասարակության մեջ վարվելաձևին, խոսքի մշակույթին, իր խոսքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին: Լեզվի հիշյալ գործառույթների հաշվառումը և տարրական դպրոցում լեզուների ուսուցման գործընթացում էապես կարևորվող արժեքների բացահայտումը դիտարկվում են լեզվական առարկաների ուսուցման նպատակների համատեքստում: Դրանք պետք է համապատասխանեն նաև ուսումնական առարկաների հիմնական գործառույթներին և արժեքային համակարգի ձևավորման գործում ունեցած նշանակությանը:

Մայրենի լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ: Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից: Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը. Ստեղծվում է բարձրամշակույթ լեզվական միջավայր: Ընթերցանության տեքստերը մեծ հնարավորություն են ընձեռում դպրոցականի բառապաշարի հարստացման համար: Դա արտահայտվում է նրա գրավոր և բանավոր խոսքի մեջ, զրույցներում, գրավոր աշխատանքի տարբեր տեսակներում:

Այսպիսով՝ տարրական դպրոցում լեզուների բնագավառի ուսումնական առարկաներից յուրաքանչյուրն ունի մի քանի գործառույթ՝

. տվյալ լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրում,

. խոսքային գործունեության իրականացում,

. իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորում՝ գեղարվեստական խոսքի միջոցով:

Այս գործառույթներից յուրաքանչյուրն ունի որոշակի արժեքային ներուժ, որը բացահայտում է սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական ուղղությունները: Լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրման գործառույթի իրականացումն առաջին հերթին ուղղված է կրթության բովանդակության իմացական բաղադրատարրի յուրացմանը և հետևաբար բնութագրում է կրտսեր դպրոցականների իմացական արժեքների ձևավորման նշանակությունը: Լեզվական գործունեության իրականացման գործառույթը նպաստում է

հաղորդակցական արժեքի ձևավորմանը, որն ընդգրկվում է սոցիալական արժեքների խմբում: Իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորման գործառույթն ուղղված է բարոյական և գեղագիտական արժեքների ձևավորմանը, ինչպես նաև անձի՝ շփման և հաղորդակցման սոցիալական արժեքների ձևավորմանը: Դպրոցական ուսուցման համակարգում ուսումնական առարկաների գործառույթները միավորվում են որոշակի նպատակներով: Քանի որ տարրական դպրոցում լեզուների ուսուցումն իրականանում է մի քանի առարկաների միջոցով, դրանց նպատակները և՝ մանկավարժական, և՝ մեթոդական հետազոտություններում միասնաբար են ներկայացվում: Այդ հետազոտությունները նվիրված են լեզուների ուսուցման նպատակների վերլուծությանն ու հիմնավորմանը: Մեթոդամանկավարժական գրականության մեջ լեզուների ուսուցման նպատակների ձևակերպման ժամանակ հիմնական ուշադրությունը հատկացվում է լեզվի գործնական- ճանաչողական կողմի յուրացմանը և դրա հիման վրա՝ լեզվի տիրապետմանը:

Լեզուն յուրացնել նշանակում է ապահովել իմացություն հետևյալ ոլորտներում՝

1. Լեզվական
2. Ուղղագրական-ուղղախոսական
3. Լեզվաբանական
4. Հաղորդակցական

Լեզվական իմացությունը ենթադրում է լեզվի համակարգի, քերականական նյութի տիրապետում: Ուսումնառության տարիներին երեխաներն արդեն գործնականում տիրապետում են լեզվին: Լեզվաբանական իրազեկությունը ներառում է լեզվաբանության հիմունքների վերաբերյալ գիտելիքները, լեզվաբանական հասկացությունների յուրացումը, ճիշտ և տեղին գործածությունը: Հաղորդակցական իրազեկությունը ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների, հաղորդակցական մշակույթի տիրապետում: Մայրենի լեզվի ուսուցման նպատակների այսօրինակ դիտարկումն ուղղված է առաջին հերթին ուսումնական տվյալ բնագավառին ներհատուկ գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացմանը, հետևաբար չի կարող լիարժեքորեն լուծել կրտսեր դպրոցականների զարգացման և արժեքային համակարգի ձևավորման բոլոր խնդիրները:

Կ.Դ.ՈՒշինսկին, որպես լեզվի ուսուցման առաջնային նպատակ, դիտարկել է երեխայի անձի զարգացումն ու դաստիարակումը, մայրենի լեզվի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը, խոսքի մշակույթի զարգացումը, հատկապես մայրենիի զգացողությունը: Տեսական դասընթացի յուրացումը, տվյալ լեզվի համակարգի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը նպատակներ են, որոնք ապահովում են երեխայի դիրքորոշումները:

«… Երեխան, ուսումնասիրելով մայրենի լեզուն, միայն պատմական հնչյուններ չէ, որ սովորում է, այլև հոգևոր կյանք և ուժ է ըմպում մայրենի լեզվի մայրական կրծքից»,- գրում է Կ.Դ.ՈՒշինսկին: Ի հաստատումն մանկավարժական նման մոտեցման ' վերջին տարիներին լեզուների ուսուցման նպատակներին նվիրված հետազոտություններում շեշտադրվում են կրտսեր դպրոցականների զարգացման խնդիրները' հատկապես մտավոր զարգացման, լեզվական մշակույթի բարձր մակարդակի, գեղագիտական ճաշակի ձևավորման և բարոյական կատարելագործման տեսանկյունից:

Տարրական դպրոցում լեզվի գործառույթներին լեզուների ուսուցման նպատակների համապատասխանությունը իր արտացոլումն է գտնում կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում: Տարրական դպրոցում լեզուների ուսուցումն ուղղված է հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը'

1. Կրտսեր դպրոցականների իմացական զարգացում, մայրենի լեզվի վերաբերյալ գիտելիքների, ունակությունների, դրանց օրինաչափությունների ու փաստերի վերլուծության և ընդհանրացման փորձի ձևավորում:
2. Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացում,նրանց մեջ խոսքային գործունեության հիմնական տեսակների ձևավորում,խոսքային հաղորդակցման մշակույթի դաստիարակում, որն ընկալվում է իբրև երեխաների հաղորդակցում սոցիալական արժեքներին:
3. Կրտսեր դպրոցականների գեղագիտական ճաշակի ձևավորում. լեզվի ուսուցումը զուգորդվում է գեղագիտական արժեքների յուրացմանը:

Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

• Գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում, գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում, գեղագիտական ճաշակի ձևավորում,
• Բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավորմանը, իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում:

Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ, նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
2. Հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
3. Գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում.
4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները , աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը.
5. **Կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.**
6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.
7. Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք.
8. Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը.
9. Հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.
10. Անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը.
11. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.
12. Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Ընտանեկան արժեքների զարգացումը գրական ստեղծագործությունների միջոցով

Ընտանեկան արժեքների դերը մեր կյանքում

Ընտանիքը և ընտանեկան արժեքները երկու հասկացություններ են, որոնք չեն կարող գոյություն ունենալ առանց միմյանց: Ընտանեկան արժեքները կորցնում են իրենց նշանակությունը, եթե ընտանիք չկա: Իսկ ընտանիքը չի կարող գոյություն ունենալ առանց հիմնարար սկզբունքների, որոնք կարող են պահպանել նրա ամբողջականությունն ու հոգևոր առողջությունը: Ընտանեկան արժեքները մարդու վերաբերմունքն է մարդու նկատմամբ՝ հագեցած սիրով և հոգատարությամբ:

Գոյություն ունենալով հասարակության մեջ՝ մարդը ստիպված է անընդհատ բախվել տարբեր տեսակի դժվարությունների ու խնդիրների, ամենադժվար սթրեսների հետ, որոնք գալիս են կյանքի ցանկացած հույսի և երազանքի փլուզման պատճառով: Այս փոթորկի մեջ միայնակ գոյատևելը չափազանց դժվար է, գրեթե անհնարին: Սիրելիների հետ տունը դառնում է հանգիստ ապաստարան, որտեղ դուք կարող եք ստանալ օգնություն, աջակցություն, խնամք, հանգստանալ և ուժ ձեռք բերել՝ ապրելու և վայելելու կյանքը: Այսպիսով, ծնողների և երեխաների հարաբերությունները հասնում են զարգացման բարձր մակարդակի միայն այն դեպքում, եթե կողմերից յուրաքանչյուրը հասկանում է մյուսի զգացմունքները, ձգտումները և շահերը: Միևնույն ժամանակ, անընդունելի է բռնի միջամտությունն ու ներխուժումը անձնական տարածք՝ այլ անհատականություն ձևավորելու, ենթարկեցնելու և այն իրենց համար «վերափոխելու» նպատակով:

Ազնվությունն և անկեղծությունը գործընկերների միջև հարաբերությունների մաքրության և թափանցիկության բանալին են: Սա վերաբերում է ծնող-երեխա, ուսուցիչ–աշակերտ համակարգերին: Այս հատկությունները, իրենց առավելագույն արտահայտությամբ, առաջացնում են ևս մեկ անբաժանելի հատկանիշ. **վստահություն:** Վստահությունը հնարավոր չէ գնել ոչ մի փողով, այն կարող է դժվար լինել վաստակել և շատ հեշտ կորցնել: Արժեքների նման օրինակները կարելի է երկար շարունակել:

Ընտանեկան արժեքները գրականության մեջ

Ընտանիքը և ընտանեկան արժեքները անհատի մշակույթի հիմքի կարևորագույն տարրերից են: Այս առումով առաջնային են ընտանեկան հարաբերությունները: Դրանք հիմք են հանդիսանում մարդկային բարոյականության ձևավորման համար: Ընտանեկան թեման թափանցում է ողջ գրականությունը: Գրական փոքր ժանրերը, ինչպիսիք են առածները, առակները, կլանում են դարավոր ժողովրդական փորձը:

Առակներ

Առակները մեր լեզվում ոսկու պաշարներ են: Ժողովրդական մշակույթը ստեղծել է բանավոր հիշողության հատուկ մեխանիզմներ: Շատ սերունդների փորձը փոխանցվել է կարճ ասույթների՝ առածների և ասացվածքների տեսքով: Նրանք լայնորեն կիրառվում են առօրյա խոսքում: Նրանք, ի դեպ, հանկարծակի են հայտնվում մտքում և թույլ են տալիս ավելի պարզ արտահայտել ձեր մտքերը:

Ընտանեկան ասացվածքները վկայում են ժողովրդական մշակույթի հարստության և իմաստության մասին: Նրանք օգնում են մեզ հասկանալ մեր ժողովրդի պատմությունը, սովորեցնում են սիրել մեր հայրենիքը, լինել ազնիվ և աշխատասեր, սիրել և հարգել մեր ծնողներին:

Վլադիմիր Դալը «առակ» բառը մեկնաբանել է որպես «դաս օրինակով»:

Էպիկական ժանր՝ դաստիարակչական բնույթի փոքրիկ պատմողական ստեղծագործություն, որը պարունակում է կրոնական կամ բարոյական ուսմունք այլաբանական ձևով: Այն մոտ է առածին, բայց նրանից տարբերվում է ընդհանրացման լայնությամբ, առակի մեջ պարունակվող գաղափարի նշանակությամբ: Առակը չի պատկերում կերպարներ, մատնանշում է գործողության վայրն ու ժամանակը, ցույց է տալիս զարգացման մեջ գտնվող երևույթները. դրա նպատակը ոչ թե իրադարձություններ պատկերելն է, այլ դրանք հաղորդելը: Առակը հաճախ օգտագործվում է ուղղակի ուսուցման համար և հետևաբար ներառում է այլաբանության բացատրությունը:

Առակը փոքրիկ պատմություն է, որը փոխանցում է ինչ-որ ուսուցում:

Առակները խոսքի իսկական արվեստն են՝ ուղիղ դեպի սիրտ գնալու համար: Օգտակար է դրանք ժամանակ առ ժամանակ վերընթերցել և մտածել ամենակարևոր բաների մասին: Որոշ առակներ պարունակում են խորը մնայուն իմաստ ընտանիքի հավերժական արժեքների մասին:

Ազգային եվ համամարդկային արժեքները ժողովրդական բանահյուսության մեջ

Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը: Ամեն մի սերունդ մի օղակ է անցյալի և ապագայի միջև և ապահովում է ինչպես տվյալ համակարգին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ փոփոխումը: Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը դա նպաստում է սովորողների ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը: Մարդասիրության ուղին անցնում է բարոյական նորմերի, հայրենասիրության ճանաչողության, պատմության հերոսական դրվագների գնահատման միջով՝ ուղեկից ընտրելով նաև ազգային ավանդույթները: Հայրենասիրության գաղափարը, հայրենիքին նվիրված լինելը հատկապես ամրապնդում է անձի էությունը, ուժ ու կորով ներարկում նրան՝ որպես հոգու առաքինության ամենաառաջնային դրսևորումներից ամենակարևորը: Դա իրականացվում է փոքր տարիքից: Արդի ժամանակաշրջանում սրվել է հետևյալ հիմնախնդիրը՝ ինչպես մտնել համամարդկային կյանք՝ չկորցնելով մեր մշակույթի հոգևոր արժեքները, չշեղվելով ու չգնալով ազգավերացման ուղիով: Ազգային և համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր ազգի լիարժեք անդամ: Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և

համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ: Մանկավարժությունը գիտություն է դաստիարակության մասին, անհատին զինում է դարերով կուտակված գիտական իմացությամբ նրա մեջ պատվաստելով ընդունակություններ, հմտություններ, ստեղծագործական կարողություններ, ձևավորում է գիտական, հոգևոր աշխարհայացք, բարոյական, զգացմունքային համոզմունքներ, ըմբռնումներ, հասարակական հաղորդակցման և վարքի դրսևորման համապատասխան իրավիճակներ: Այս թվարկված որակները պատմական զարգացման ընթացքում ենթարկվում են որոշակի ձևափոխումների՝ իրենց վրա կրելով ժամանակի սոցիալ քաղաքական, գիտական առաջընթացի և կյանքի պայմանների կնիքը:

Արցախյան բանահյուսություն

Բարձր բարոյական և գեղագիտական արժեքների շտեմարան է արցախյան բանահյուսությունը: Արցախյան ժողովրդի մեծագույն ստեղծագործություններում նկարագրված են արցախյան ժողովրդի հոգեբանական կերտվածքը, աշխարհընկալումը, մարդու և մարդկային հարաբերությունների հումանիստական գաղափարները: Արցախյան ժողովրդի հույզերը, զգացմունքները պատկերավոր լեզվով արտահայտված, հոգու ջերմությամբ ստեղծում են մնայուն արժեքներ ընթերցողների շրջանում: Դրանք արցախյան ժողովրդի գեղարվեստական մտքի փայլուն էջեր են , մտքի վիթխարի թռիչքներ: Արցախի ժողովուրդի հերոսական ոգին միշտ հույսերով և տագնապներով է նայել ապագային՝ աչքի ընկնելով իր լավատեսությամբ:

Ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործություններում նկարագրված են հերոսական եղելություններ, լիարժեք կերպով տրված են ժողովրդի կյանքը, նրա կենցաղը, ավանդույթները, ազգային դիմագծերը, նրա ազատատենչությունը, հայրենասիրությունը, ուղղամտությունը, պարզությունը, դիմացկունությունը, լավատեսությունն ու հավատարմությունն իր հողին:

Մարդու գիտակցության բարձր արժեքների համակարգի մեջ են մտնում՝ հայրենասիրությունը, աշխատասիրությունը, մարդասիրությունը և այլն: Բանահյուսության բոլոր ժանրերում տեղ են գտել համամարդկային արժեքների դրսևորման օրինակներ:

Առանձին ստեղծագործություններում արտահայտվում են մարդկային հարաբերությունները: Միջանձնային հարաբերություններում արժևորվում է արդարությունը, բարին, մարդասիրությունը, իմաստությունը:

Ազգային դաստիարակությունը ելնում է անձնավորության զարգացման և դաստիարակության գործում միջավայրի կարևոր դերի ըմբռնումից: Մարդը կարող է դաստիարակավել միայն իր հարազատ միջավայրում՝ յուրացնելով իր նախնիների փորձն ու ժառանգությունը, ժողովրդական բանահյուսությունը: Բնական է, որ նա այդ միջավայրում կդաստիարակվի տվյալ մշակույթը պաշտպանելու ոգով: Ազգային դաստիարակությունը չի հակասում համամարդկային դաստիարակության պահանջին, ավելին, ազգային դաստիարակությունը կարող է կրել համամարդկային դաստիարակության իդեալը և լիովին ընդունել համամարդկային արժեքների առաջատար դերը: Ավելին, համամարդկայինը նույնպես ազգային է և կոնկրետ ազգայինի ամենաարժեքավոր տարրերի համալիր է, որով յուրաքանչյուր ազգ գնում է դեպի համամարդկային մշակութային տիրույթ. փորձելով յուրացնել համամարդկայինը՝ միաժամանակ հարստացնում է այն:

Այսօր վտանգված է սովորողների ազգային գաղափարախոսությունը և նկատվում է նահանջ ազգային որոշ արժեքներից: Անհրաժեշտ է դպրոցի կրթադաստիարակչական համակարգում բովանդակային հագեցվածություն ազգային մշակութային արժեքներով: Ազգապահպան գործում վկայակոչում ենք հայոց մեծերին և արժեքավոր հղումներով կատարում եզրահանգումներ, նշելով, որ գրեթե բոլոր դարաշրջաներում ժողովուրդը ջանացել է իր ստեղծագործական, իմացական արգասիքով ամրապնդելու ազգային ոգին, հպարտությունը մարդասիրությունը, հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը: Դպրոցի կարևորագույն նպատակն է նոր սերնդի ներքին, բարձր համոզվածության կերտումը, ազգային արժեքների, ավանդույթներին, սովորույթների ձեռքբերումն ու պահանումը: Արցախի ժողովրդի ազգապահպան գործում մեծ է արցախյան ժողովրդական բանահյուսության դերը: Հատկապես այն ժամանակ, երբ ազգային դաստիարակության ոլորտում նկատվում է ազգային արժեքների, մտածելակերպի, բարոյական նորմերի համընդհանուր նահանջ: Արցախյան բանահյուսությունը ժողովրդի ոչ միայն մշակութային հարստությունն է, այլև նրա հոգևոր գանձարանը, որի արժեքները ըստ արժանվույն գնահատելուց հետո պարտավոր ենք այն խնամքով հանձնել սերունդներին:

Արցախյան բանահյուսությունն աչքի է ընկնում իր խոսքի անկեղծությամբ, անմիջականությամբ, մարդկային նուրբ թախիծով, բայց և լավատեսական ոգով, գեղարվեստական բարձր արժանիքներով և համամարդկային արժեքներով: Որպես անձնավորություն՝ մարդը ձևավորվում է հասարակական հարաբերությունների որոշակի համակարգում նպատակասլաց ու բազմակողմանի դաստիարակության միջոցով: Ամբողջ սերնդի աշխարհայացքի ձևավորման ու վարքագծի մշակման, գաղափարական գեղագիտական, հոգևոր-բարոյական դաստիարակության, կամքի կոփման ու զգացմունքների հղկման, հուզաշխարհի ազնվացման, հոգևոր հարստությունների կուտակման անսպառ ակունք է Արցախի ժողովրդական բանահյուսությունը: Այն միաժամանակ նաև ճանաչողական և ներշնչաքի զորեղ աղբյուր է: Այն, ինչ ստեղծել են մեր նախնիները, հեշտ ճանապարհով ձեռք չի բերվել: Եղել է իսկական անձնվիրություն և անշահախնդրություն: Իսկ ստեղծածը պաշտպանելու և կրկնապատկելու համար ներկա սերունդը պետք է սրբորեն պահպանի մեր նախնիների ավանդները: Դրա համար մենք՝ մանկավարժներս, պետք է մեր սաներին դաստիարակենք այնպես, որ նրանք պաշտպանեն ազգային և համամարդկային արժեքները, իրենց ազգը, երկիրը, շրջապատի բնությունն ու կենդանական աշխարհը, ճանաչեն ու գնահատեն գեղեցիկը, ունենան գիտակցական կարգապահություն, թույլերին ու կարիք ունեցողներին օգնելու պատրաստակամություն, լինեն բարձր մակարդակի առաքինություններով օժտված բարոյական անձնավորություն, կելեկտիվի իսկական անդամ և **հայրենիքի համար** /կյանքը զոհելու/ **պայքարելու և հաղթելու** պատրաստակամությամբ օժտված քաղաքացի:

Արցախյան ժողովրդական բանահյուսության մեջ աչքի են ընկնում մարդասիրության, բարոյականության, հայրենասիրության և այլ առաքինությունների գաղափարները, որոնցով այնքան շռայլորեն օժտված են Արցախի մեծ ու փոքր հայ բնակիչները: Դաստիարակությունը, ըստ Ուշինսկու, ոչ միայն պետք է զարգացնի մարդու գիտակցությունը, մտածելակերպը և տա նրան տեղեկությունների որոշակի ծավալ, այլև, պետք է բոցավառի լուրջ աշխատելու ծարավ, առանց որի նրա կյանքը չի կարող լինել ոչ պիտանի, ոչ էլ երջանիկ: Արցախյան ժողովրդական բանահյուսությունը լայն հնարավորություն է տալիս փոքրերին և մեծերին՝ առնչվելու բարու և չարի հետ, մարդու բարոյական ինքնագիտակցության բովանդակության, պարտքի, խղճի, պատասխանատվության, արժանապատվության, մարդու հուզական ապրումների հետ և

դրանց ազդեցության ներքո կազմակերպելու իրենց անձնական հասարակական վարքը: Բանահյուսության մեջ դրական հերոսը բարության մարմնավորումն է: Նա ոչ միայն մեծ մարդասեր է, աշխատում է նվիրվել բարեկամներին ու հայրենակիցներին, այլև մեծահոգի է նույնիսկ իր թշնամիների նկատմամբ:

Այսօր հայ ազգային **դպրոցում առաջ է քաշվում** կրթության, ազգային ոգով և համամարդկային **արժեքներով դաստիարակելու կարևորագույն խնդիրը**: Հազիվ թե հարկ լինի ապացուցելու արցախահայության ժողովրդական մանկավարժության ուսումնասիրության կարևորությունը, նրա քաղաքական ու դաստիարակչական մեծ նշանակությունը ներկայիս և մանավանդ ապագա սերունդների համար: Արցախյան բանահյուսության ինքնատիպ ու անգնահատելի գոհարներ՝ բազմաթիվ ասացվածքներ, առածներ, հեքիաթներ, երգիծական զրույցներ. առակներ և ժողովրդական հանճարի այլ ստեղծագործություններ իրենց բովանդակությամբ և ձևով, արտահայտած կրթական են դաստիարակչական խնդիրներով խիստ բազմազան են: Նրանցում արտացոլվում է մարդկային կերպարների, գործող անձերի բարոյական հատկանիշներն ու հատկությունները, ֆիզիկական ուժը, մարդասիրությունը, հնարամտությունը և այլ որակներ: Բնորոշ է, որ բարոյականության հասարակական ըմբռնումներն արցախյան բանահյուսության մեջ բխում են համամարդկային այնպիսի արժեքներից, ինչպիսիք են մարդասիրությունը, բարու արարչագործությունը, հայրենասիրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, խաղաղասիրությունը և այլն: Ահա երկրամասի ժողովրդի բարոյական դավանանքի բազում արտահայտություններից միայն մեկ նմուշ, որը, ժամանակի ընթացքում բյուրեղանալով, դարձել է ողջ հայ ժողովրդի բարոյական հավատամքը՝ ուղղված դարերին, սերունդներին.

Ժառանգ թողե,
Կամար կապե,
Մին կիր կյիրի,
Մին ծառ տնգե,
Հավատդ էլ դայիմ փոնե:

Հիրավի, բանաձևված այս պատգամներն ամփոփում են ներդաշնակ ու համերաշխ կյանքի ընդունակ մարդկության հոգեղեն երջանկության, նրա բարձրագույն բարոյախոսության ողջ բովանդակությունը:

Բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկա առարկայի դասավանդման ընթացքում

Բարին և մաթեմատիկական կրթությունը

Մեծագույն բարիք է կրթությունն ընդհանրապես. այն առաջին հերթին հոգևոր հարստության, մարդկային արժեքների ձևավորման հիմնական ճանապարհն է, քանի որ հնարավորություն է տալիս հաղորդակցվել մարդկության ստեղծած մշակութային ժառանգության, արժեքների հետ, զինվել դրանցով, ինչը նաև ստեղծում է բարիք գործելու լայն հնարավորություններ:

Մաթեմատիկական կրթությունը բարիք է որպես կրթության բաղկացուցիչ մաս: Այն բարիք է իր կիրառական նշանակությամբ, սովորողների մտածողության, ինտելեկտի ձևավորման ու զարգացման և այլ գործառույթների մեջ ունեցած դերով:

Սովորողի մաթեմատիկական կրթության իրավունքը իրականացվում է հանրակրթության միջոցով: Եվ երբ կրթությունը ինչ–որ մեկի համար ձևով հասանելի լինելով, բովանդակությամբ հասանելի չի դառնում, ապա այն դառնում է չարիք. սովորողը դժկամությամբ է մասնակցում դասերին, ատելությամբ է լցվում առարկայի, անգամ՝ ուսուցչի նկատմամբ, նախանձում է լավ սովորող աշակերտներին և այլն: Այստեղ մաթեմատիկական կրթությունը՝ նրա վատ կազմակերպելու արդյունքում կարող է հանդես գալ որպես չարի ձևավորման պատճառ:

Մաթեմատիկական կրթության միջոցով բարու ձևավորումը սերտորեն կապված է ճշմարիտի հետ: Մաթեմատիկան, հանրակրթության միջոցով նրա ուսուցումը, ճշմարտության որոնման գործընթաց է, իսկ մաթեմատիկայից ստացած գիտելիքները անառարկելի ճշմարտություններ են:

Բարին անշահախնդիր օգնությունն է: Ինչ–որ մեկին օգնել՝ նշանակում է խրախուսել, ճիշտ գնահատել, օժանդակել, աջակցել, պաշտպանել: Այս ամենը ուսուցման գործընթացում կարող է դրսևորվել առաջին հերթին ուսուցչի կողմից: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացը նման դրսևորումների կարիք շատ ունի: Ճիշտ գնահատման կարիք ունեն բոլոր աշակերտները: Իսկ խրախուսման, օժանդակության, աջակցության կարիք ունի, մանավանդ, մաթեմատիկական ընդունակություններով աչքի չընկնող աշակերտը: Չափորոշիչային նվազագույն մակարդակով նախատեսված թեկուզ և շատ հեշտ լուծվող

վարժության համար ուսուցչի կողմից ասված գովասանքի մեկ խոսքը կարող է նրան ներքաշել ուսուցման գործընթացի մեջ։

Նման օգնության կազմակերպման հնարավորություն են տալիս նաև միջառարկայական կապերը. մաթեմատիկայի ուսուցման գործընթացում կարելի է կիրառել այլ ուսումնական առարկաների ներուժը։ Օրինակ. դասարանի այն աշակերտին, որը չի փայլում մաթեմատիկական ունակություններով և ոչ մի կերպ չի կարողանում ներգրավվել մաթեմատիկայի ուսուցման գործընթացի մեջ, կարող է որոշակի հետաքրքրություն և իմացություն ցուցաբերել այլ առարկայի նկատմամբ։ Կարելի է օգտագործելով դա, առաջադրել այդ առարկայի հետ առնչվող մաթեմատիկական հանձնարարություններ։ Կատարելով իր հետաքրքրությունների շրջանակին վերաբերող առաջադրանքները և ճիշտ պատասխանները ստանալով՝ աշակերտը կսկսի հաճույքով մասնակցել մաթեմատիկայի դասերին, և հնարավոր է հետագայում հասնի որոշակի հաջողությունների։

Մաթեմատիկայի ուսուցումը հնարավորություն է տալիս նաև կազմակերպել աշակերտների փոխօգնություն, ինչը կարող է նպաստել բարու որակի ձևավորմանը՝ աշակերտներից մեկի մոտ՝ անշահախնդիր օգնություն ցույց տալու, իսկ մյուսի մոտ՝ երախտագիտության զգացմունքի դրսևորման միջոցով, ինչը նույնպես բարու հատկանիշ է։

Փոխօգնությունը աշակերտների մոտ կարող է ձևավորել նաև բարու այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բայրացակամությունը և հարգալից վերաբերմունքը. առանց այդ հատկանիշների դժվար է իրականացնել փոխօգնություն։

Շատ ավելի դժվար է մաթեմատիկայի դասավանդման ընթացքում իրականացնել հանդուրժողականության՝ բարին բնութագրող հատկանիշի ձևավորումը։ Առաջին հերթին ուսուցիչն այն կարող է իրականացնել սխալվելու նկատմամբ իր և աշակերտների ունեցած վերաբերմունքով։ Մաթեմատիկայի ուսուցման գործընթացը մշտապես ուղեկցվում է սխալվելու վտանգով։ Առանց սխալվելու հաճախ անհնար է լինում գտնել մաթեմատիկական խնդրի լուծումը։

Կյանքը նույնպես հետագայում առաջադրելու է խնդիրներ, որոնց լուծումը անհնար կլինի գտնել սխալվելու վտանգից վախենալու դեպքում։

«Ազնիվ ապրելու համար անհրաժեշտ է նաև սխալվել» Լ.Տոլստոյ

Այսպիսով, սխալվելը բարոյական և մեթոդական տեսակետներից լիովին արդարացված գործողություն է, իսկ դրա նկատմամբ անհանդուրժողականությունը՝ չարը ծնող հատկանիշ: Հետևապես՝ պետք է հանդուրժել աշակերտի սխալ մոտեցումներն ու մտքերը:

Ուսուցչի անհանդուրժողականությունը կարող է դրսևորվել նաև առաջադրված հարցի պատասխանը ուշ ստանալու դեպքում, ինչը կարող է հետևանք լինել աշակերտի դանդաղ մտածողության: Նախ պետք է հիշել, որ ուշացած պատասխանը կարող է լինել նաև կշռադատված պատասխան, ինչը ինքնին խրախուսելի է: Իսկ մաթեմատիկական հարցերի պատասխանները շատ դեպքերում ստացվում են երկարատև որոնումների ու կշռադատման արդյունքում: Հետևապես, հոգեբանական և մեթոդական տեսակետից չի կարելի սխալ համարել առաջադրված հարցադրման պատասխանի ուշացումը: Իսկ դրա նկատմամբ անհանդուրժողականությունը նաև չարի հատկանիշ է:

Մերը և մաթեմատիկական կրթությունը

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացում որպես գործունեություն սիրո արժեքի ձևավորման հիմնական առարկան պետք է լինի մաթեմատիկան:

Ուսուցիչը պետք է կարողանա ընտրել նյութի մատուցման այն ձևը, որը սիրելի է դարձնում մաթեմատիկան և մաթեմատիկայի ուսուցման գործընթացը: Առաջին հերթին, դրա համար ճանապարհ է բացում ճշմարիտը իմանալու աշակերտի բնական մղումը, որ դրսևորվում է հետաքրքրասիրության ձևով: Մաթեմատիկայի դասընթացում ամփոփված նյութը, հետաքրքրաշարժ խնդիրներն ու պատմական անցքերը աշակերտների հետաքրքրասիրության բավարարման շատ լայն հնարավորություններ են ընձեռում:

Մաթեմատիկական նյութի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը մեծապես նպաստում են մաթեմատիկական խաղերը: Հանրահայտ է, որ երեխաների հիմնական կիրքը խաղն է, ինչը կարելի է օգտագործել նաև մաթեմատիկական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրասիրությունը մեծացնելու համար:

Մաթեմատիկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն ձևավորող դասերը, անկասկած, նաև աշակերտի հանդեպ ուսուցչի սիրո դրսևորումներն են, որոնք աշակերտների սրտերը լցնում են փոխադարձ սիրո նվիրական զգացումով:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄՈՏ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԻՄ ՔԱՅԼԱՇԱՐԸ

Աղբի տեղն աղբամանում է

Աղտոտման դեմ պայքարի հիմնական միջոցը չաղտոտելն է:

Շրջակա միջավայրի պահպանություն

Երեխաների մեջ պետք է սեր զարգացնել բոլոր կենդանի էակների նկատմամբ, հասկանալու, կարեկցելու և օգնելու կարողություն:

Մեր կրտսեր բարեկամները

ԸՆԿԵՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

հոգատարություն

հանդուրժողականություն

բարյացակամություն

հարգանք

Եզրակացություն

Մարդկության բարձրագույն արժեքների վրա կենտրոնացած աշխարհայացքը երիտասարդ սերնդի դաստիարակության հիմնական խնդիր–նպատակն է: Այս արժեքները չպետք է կորչեն դինամիկ զարգացող աշխարհում, և կուտակված պատմամշակութային փորձը պետք է օգտագործվի ժամանակակից մարդուն կրթելու համար:

Դպրոցական դասընթացում կան աշխատություններ, որոնցում հեղինակները բարձրացնում են մարդկային հարաբերությունների, արժեքների խնդիրները: Գրականության դասերին մենք բարոյական և հոգևոր դաստիարակություն ենք ստանում, գնահատում հերոսների արարքները:

Անհրաժեշտ է, որ ծնողներն իրենց երեխաների մեջ սեր զարգացնեն բոլոր կենդանի էակների նկատմամբ, հասկանալու, կարեկցելու և օգնելու կարողություն:

Գեղարվեստական ստեղծագործությունները վերլուծելուց հետո կարելի է որոշակի եզրակացություններ անել.

Այդպիսի ստեղծագործությունների ուսումնասիրության դասերին պետք է կատարվի կերպարների արտաքին տեսքը, գործողությունները և պահվածքը նկարագրող դրվագների մանրակրկիտ վերլուծություն.

Գեղարվեստական գրականությունը մեծ դաստիարակչական ներուժ ունի: Սրանք մի կողմից լավ հարաբերություններ ունեցող պատմությունների և հեքիաթների օրինակներ են, գրական հերոսների կերպարը որպես երեխայի համար օրինակելի, մյուս կողմից՝ մանկավարժական մշակույթի բարելավման հնարավորություն:

Պետք է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել այն փաստի վրա, որ այն մարդը, ով չի գնահատում իր ընտանիքը, ընկերներին, հայրենիքը, ով չգիտի, թե ինչպես ժամանակին օգնության հասնել, հասկանալ դիմացինին, չի կարող լինել գրավիչ, համակրանք վայելել և արդարացում առաջացնել, նման աշխատանքը օգնում է դաստիարակել բարձր բարոյական և հոգեպես զարգացած անհատականություն և աշակերտներին ծանոթացնել մարդկային արժեքներին:

Մանկավարժական գրագիտությունը, մանկավարժական հմտությունները կարևոր են ոչ միայն դպրոցում, այլև ընտանիքում: Ընտանիքի և դպրոցի գործողությունների միասնությունը բազմակողմանի զարգացած, կիրթ, ֆիզիկապես և բարոյապես առողջ, աշխատունակ ու

սիրող, հայրենասեր և ազգասեր անձի դաստիարակության գրավականն է, ում բոլոր մտքերը կապված են միմյանց հետ՝ կոլեկտիվ ստեղծագործական գործունեությամբ:

Այսօր բարեկրթություն և արժեհամակարգ ձևավորելը ինձ համար ավելի առաջնային են, քան ակադեմիական գիտելիքները... ես չեմ ասում, թե պետք չէ վայելչագրության կանոնները կամ բազմապատկման աղյուսակը սովորեցնել, ուղղակի, քանի որ երեխաներին ակադեմիական գիտելիքներ տալը հանրակրթական դպրոցների հիմնական գործառույթն է, դրան համահավասար, ոչ պակաս, պետք է ներմուծել բարեկրթության կանոնները, բոլոր առարկաների, բոլոր դասաժամերի անքակտելի մաս դարձնելով:

Համոզված եմ, որ եթե անկախ տարիքից և սեռից, անձը աղբը թափում է որտեղ պատահի, հաջորդ քայլով կկոտրի ծաղկած ծառի ճյուղը՝ հենց այնպես, ուղղակի այդպես ուզեց, հաջորդ քայլով՝ կվնասի փոքրիկ շնիկին, հաջորդով՝ ձեռք կբարձրացնի տարիքն առած մարդու վրա:



Եթե- ապա



- Սիրելի՛ մանկավարժներ, հուսով եմ գիտակցում եք, որ այսօր մեր անգնահատելի աշխատանքը հավասար է սահմանը պահող զինվորի սխրանքին, և մենք միասին կերտում ենք մեր վաղվա օրը:

Գրականություն

1. Միքայելյան Հ. Ս., Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը, Էդիթ պրինտ, 2011թ
2. Նալչաջյան Ա, Մկրտչյան Ս, Էթնիկական մանկավարժություն, Եր., 2003:
3. Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը, ազգագրական ակնարկ, հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ.12, Երևան, 1981:
4. Մելքումյան Մ, Ղ.Աղայանի մանկավարժական ժառանգությունը և նրա այժմեականությունը, Եր., 1991:
5. Ա.Ավետիսյան, Գիտելիք աշխարհի գիտական պատկերը, Խորհրդային մանկավարժ, 1979:
6. Հարությունյան Վ. Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, Եր., 1959:
7. Գրիգորյան Մ. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971:
8. Գևորգյան Ս.Ա. Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում. Երևան, 2002:
9. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ.2, Երևան, Հայպետհրատ, 1959:
10. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, 2-րդ գիրք, Երևան, 2005: